

Գրավով չապահովված խնդրահարույց վարկերի և վարկային գծերի վերակառուցման (վերաֆինանսավորման) պայմաններ

	Ընդհանուր պայմաններ ¹		ՀՀ ՊՆ համակարգի զինվորական կոչում ունեցող անձնակազմին տրամադրված սպառողական վարկերի վերաֆինանսավորման հատուկ պայմաններ ⁴
	1. Հիմնական պայմաններ		
1.1	Արժույթ	AMD ²	AMD ²
1.2	Հասանելի վերակառուցման տեսակներ	Վերաֆինանսավորում՝ գործող ժամկետանց պարտավորությունների մարում նոր վարկի (ոչ քարտային) տրամադրմամբ, այդ թվում նաև 3-րդ անձին վարկ տրամադրելու միջոցով ³	Վերաֆինանսավորում՝ գործող պարտավորությունների մարում նոր վարկի (ոչ քարտային) տրամադրմամբ
1.3	Ժամկետանց օրերի նվազագույն քանակ	90 օր և/կամ «ոչ ստանդարտ» և ավել ռիսկի դասով դասակարգված պարտավորություն	չի սահմանվում
1.4	Ժամկետանց օրերի առավելագույն քանակ	Չի սահմանվում	Չի սահմանվում
1.5	Վերակառուցման ենթակա նվազագույն գումար (դիմումի ներկայացման պահին ընդհանուր պարտավորությունը)	200000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ ⁵	Չի սահմանվում
1.6	Վերակառուցման ենթակա առավելագույն գումար	Չի սահմանվում	Համաձայն Հավելված 1.1 ⁶
1.7	Տոկոսադրույք	1. ՀՀ դրամով վարկի վերաֆինանսավորման դեպքում (բացառությամբ 0% տոկոսադրույքով նվազող վարկային գծերի համար)՝ անփոփոխ, 2. 0% տոկոսադրույքով նվազող վարկային գծերի դեպքում - 20%, 3. արտարժույթով վարկի վերաֆինանսավորման դեպքում՝ գործող վարկի դրույք +3.5%, բայց ոչ ավելի, քան 24%	12%, որից պետության կողմից սուբսիդավորվելու է 2 %-ային կետին համարժեք մասը, իսկ 3 և ավելի անչափահաս երեխա ունեցողների համար՝ 3 տոկոսային կետին համարժեք մասը

1.8	Վարկի ամսական սպասարկման վճար	Չի սահմանվում	Չի սահմանվում
1.9	Վարկի վերակառուցման միանվագ վճար	Չի սահմանվում	Չի սահմանվում
1.10	Առավելագույն ժամկետ	60 ամիս	84 ամիս
1.11	Հաճախորդի կողմից Բանկում առկա պարտավորությունների գծով նվազագույն մարում (որոշման կայացման պահի դրությամբ)	<p>1. Տոկոսագումար (ժամկետային և ժամկետանց),</p> <p>2. դեբիտորական պարտքեր (այդ թվում՝ վարկի հետստացմանն ուղղված միջոցառումների գծով ծախսերվարկի կամ հաշվի գծով առաջացած միջնորդավճարներ, սպասարկման վճարներ և այլն),</p> <p>3. վարկի ժամկետանց մասի տոկոսի և ժամկետանց տոկոսի տույժի 20%, ընդ որում</p>	<p>1. Վարկը 30 օր և ավելի ժամկետանցված լինելու դեպքում՝</p> <p>1.1. Տոկոսագումարի (ժամկետային և ժամկետանց) 30%,</p> <p>1.2. դեբիտորական պարտքերի (այդ թվում՝ վարկի հետստացմանն ուղղված միջոցառումների գծով ծախսերվարկի կամ հաշվի գծով առաջացած միջնորդավճարներ, սպասարկման վճարներ և այլն) 30%,</p> <p>1.3. վարկի ժամկետանց մասի տոկոսի և ժամկետանց տոկոսի տույժի 30%, ընդ որում, 31.05.2018թ-ի դրությամբ «անհուսալի» ռիսկի դաս ունեցող վարկի դեպքում վարկի ժամկետանց մասի տոկոսի և ժամկետանց տոկոսի տույժի 30%-ի վճարում չի պահանջվում</p> <p>2. Վարկը 30 օրից պակաս ժամկետանցված լինելու կամ ժամկետանց չլինելու դեպքում՝</p> <p>2.1. բոլոր պարտավորությունների հանրագումար՝ բացառությամբ վարկի մայր գումարի մնացորդի</p>

1.12	Պարտավորությունների ներում	1.11 կետով սահմանված նվազագույն մարումն ապահովելու դեպքում մնացած վարկի ժամկետանց մասի տոկոսները և ժամկետանց տոկոսի տույժերը ներվում են	1.11 կետով սահմանված նվազագույն մարումն ապահովելու դեպքում մնացած պարտավորությունները, բացառությամբ վարկի մայր գումարի, ներվում են
1.13	Պայմանագրային գումար	Սահմանվում է Վարկառուի կողմից կատարված վճարների և ներումների արդյունքում մնացորդային պարտավորությունների չափով	Սահմանվում է Վարկառուի կողմից կատարված վճարների և ներումների արդյունքում մնացորդային պարտավորությունների չափով
1.14	Վարկի և տոկոսագումարների գծով մարումների իրականացում	Ամսական հավասարաչափ (անուիտետային)	Ամսական հավասարաչափ (անուիտետային)՝ 1-ին մարման ամսաթիվ՝ սահմանելով վարկային պայմանագրի կնքման ամսվան հաջորդող 2-րդ ամսվա նույն օրը
1.15	Վարկի տրամադրման ձև	անկանխիկ՝ ուղղվում է խնդրահարույց վարկի գծով պարտավորության մարմանը	անկանխիկ՝ ուղղվում է խնդրահարույց վարկի գծով պարտավորության մարմանը
2. Վարկառուին, նրա վարկային պատմությանը և եկամուտներին ներկայացվող պահանջներ			
2.1	Հաճախորդի տարիքը	Վարկի վերջնաժամկետին վարկառուի տարիքը չի կարող գերազանցել 70 տարեկանը	Վարկի վերջնաժամկետին վարկառուի տարիքը չի կարող գերազանցել 75 տարեկանը
2.2	Վարկային պատմության նկատմամբ պահանջներ	Ժամկետանց և դասակարգված պարտավորությունների բացակայություն ³	չի սահմանվում
2.3	Առավելագույն չափափակված պարտավորությունների նկատմամբ պահանջներ	Չի սահմանվում	Չի սահմանվում
2.4	Եկամուտների նկատմամբ պահանջ	Համարվում է բավարար 1.11 կետով սահմանված մարման ենթակա	Համարվում է բավարար 1.11 կետով սահմանված

		նվազագույն գումարի մուտքագրման դեպքում	մարման ենթակա նվազագույն գումարի մուտքագրման դեպքում
2.5	Երաշխավորի նկատմամբ պահանջներ (վերակառուցման ենթակա պայմանագրով երաշխավորի առկայության դեպքում)	Չի սահմանվում	Չի սահմանվում
3. Պայմանագրի փոփոխությունների իրականացում			
3.1	Գործող պայմանագրի փոփոխության անհրաժեշտություն	Իրականացվում է նոր պայմանագրի կնքմամբ	Իրականացվում է նոր պայմանագրի կնքմամբ
4. Որոշման կայացում			
4.1	Փաստաթղթերի ներկայացման ժամկետ	Հայտի ընդունման օրվանից սկսած առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում	Հայտի ընդունման օրվանից սկսած առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում
4.2	Մարման ենթակա նվազագույն գումարի չափի մուտքագրման առավելագույն ժամկետ (որոշման կայացումից հետո)	15 աշխատանքային օր	15 աշխատանքային օր
4.3	Որոշման կայացման ժամկետ	Փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում	Փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում
4.4	Որոշման վավերության ժամկետ	Որոշման կայացումից հետո 20 աշխատանքային օր	Որոշման կայացումից հետո 20 աշխատանքային օր
4.5	Վարկի վերֆինանսավորման իրականացման ձևակերպման ժամկետ	Ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում	Ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում
5. Տույժեր և տուգանքներ			
5.1	Ժամկետանց վարկի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք	Տարեկան 24%	
5.2	Ժամկետանց տոկոսագումարի դիմաց հաշվարկվող տույժ	Տարեկան 48%	

5.3	Վաղաժամկետ մարման տույժ	Չի սահմանվում
-----	-------------------------	---------------

6. Այլ պայմաններ և դրույթներ

6.1	Վարկի դասակարգման մոտեցումներ	Վարկը դասակարգվում է «ոչ ստանդարտ» ռիսկի դասով, սակայն ոչ ավելի ցածր, քան վերակառուցման պահին վերակառուցվող վարկի ռիսկի դասն է, 3 ամիս առանց ժամկետանցումների մայր գումարի և տոկոսագումարների գծով մարում իրականացնելու դեպքում «ստանդարտ» դասի վերականգնելու պայմանով	Վարկը դասակարգվում է «ստանդարտ» ռիսկի դասով
-----	-------------------------------	--	---

7. Վերաֆինանսավորման իրականացման սահմանափակումներ

7.1	Վարկի վերաֆինանսավորում իրականացվում է հետևյալ դեպքերում՝ Բանկի կողմից վարկի հետստացմանն ուղղված միջոցառումները գտնվում են - արտադատական փուլում - Ֆինանսական արբիտրաժում, -1-ին ատյանի ընդհանուր իրավասության, վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններում, -ԴԱՀԿ փուլում, Վարկի վերաֆինանսավորում չի իրականացվում սնանկության վարույթում գտնվող վարկերի դեպքում: Պետական տուրքի և այլ պարտավորությունների ծախսեր առաջանալու դեպքում, դրանք իրականացվում են Հաճախորդի կողմից:	
-----	--	--

¹Սույն պայմանները տարածվում են նաև Բանկում նախկինում գործող գրավով չապահովված վարկատեսակների վրա, երաշխավորությամբ ապահովված, ինչպես նաև այն գրավով ապահովված վարկատեսակների վրա, որոնց գրավը իրացվել է, բայց իրացումից ստացված գումարը չի բավարարել Բանկի հանդեպ ունեցած ամբողջ պարտավորության մարմանը:

²Նոր վարկը տրամադրվում է ՀՀ դրամով: Արտարժույթով վարկի դեպքում փոխարկումը իրականացվում է տրամադրման պահին ՀՀ ԿԲ փոխարժեքին համապատասխան:

³Ժամկետանց և դասակարգված պարտավորություններին նկատմամբ պահանջը կիրառելի է միայն այն, դեպքում, երբ իրականացվում է վարկառուի փոփոխություն: Կիրառվում է, միայն այն դեպքերում, երբ Բանկի կողմից պարտավորության հետստացման գործընթացը գտնվում է այնպիսի փուլում, որը խոչնդոտ է նույն վարկառուին վարկի տրամադրմանը և/կամ չի բավարարում 2.1 կետին և/կամ տեխնիկապես հնարավոր չէ նույն վարկառուի և/կամ նրա կողմից լրագրված անձի հետ պայմանագրերի ստորագրումը (մահացած, անհայտ բացակայող, արտագաղթած և այլն): Ընդ որում, հաճախորդի մահացած լինելու դեպքում երրորդ անձի միջոցով վերաֆինանսավորում իրականացնելիս կիրառելի չեն սույն պայմանների 1.3 և 1.5 կետերը: Պայմանները չեն տարածվում արդեն վերակառուցված/վերաֆինանսավորված խնդրահարույց վարկերի վրա: Ա/Ձ հաճախորդի դեպքում նոր վարկի տրամադրումն իրականացվում է տվյալ Ա/Ձ-ն գրանցած ֆիզիկական անձին:

Որոշման կայացման ամսաթվից հետո սույն պայմաններով սահմանված պարտադիր մարման գումարից բացի վարկի գծով այլ մարումների առկայության դեպքում կատարվում է պարտավորությունների վերահաշվարկ՝ մարված գումարները ուղղելով պայմաններով սահմանված մարումից և ներումից հետո մնացած պարտավորությունների մարմանը՝ համաձայն Բանկում սահմանված հերթականության:

⁴Սույն պայմանները տարածվում են Բանկի՝ գրավով չապահովված սպառողական վարկերի, այդ թվում՝ նաև

Բանկում նախկինում գործող գրավով չապահովված վարկատեսակների վրա, երաշխավորությամբ ապահովված, ինչպես նաև այն գրավով ապահովված վարկատեսակների վրա, որոնց գրավը իրացվել է, բայց իրացումից ստացված գումարը չի բավարարել Բանկի հանդեպ ունեցած ամբողջ պարտավորության մարմանը: Վարկերը պետք է բավարարեն Հավելված 1.1-ով սահմանված պահանջներին, իսկ չբավարարելու դեպքում կարող են կիրառվել «Ընդհանուր պայմանները»:

⁵ Նվազագույն գումարի սահմանափակում է կիրառելի չէ կենսաթոշակային և աշխատավարձային վարկային գծերի պայմաններով տրամադրված բոլոր վարկային գծերի համար:

⁶ Վերաֆինանսավորման ենթակա գումարը պայմաններով սահմանված առավելագույն գումարի չափը գերազանցելու դեպքում կարող է իրականացվել հաճախորդի կողմից առաջացած տարբերությունը մարելու պայմանով: Ընդ որում, նշված տարբերության վճարման համար սահմանված ժամանակահատվածը չի կարող գերազանցել սույն Պայմանների 4.2 կետով սահմանված ժամկետը:

Հավելված 1.1-ով սահմանված պահանջներին բավարարող վարկերը ներկայացվում են վերաֆինանսավորման «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ: Վարկերը «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից չվերաֆինանսավորելու կամ ֆինանսավորումը դադարեցնելու դեպքում վարկի պայմանները վերանայվում են՝ և պայմանագրով սահմանված դրույքը սահմանվում է այնքան, որքան որ պետք է լիներ վերաֆինանսավորված վարկի դրույքը, եթե ի սկզբանե տրամադրվեր սույն պայմաններով սահմանված Ընդհանուր պայմաններով (բացառությամբ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի):

«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ կողմից վարկի տարեկան տոկոսադրույքը վերանայվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: Բանկն իրավասու է վերանայել տարեկան տոկոսադրույքը երեք տարին մեկ անգամ և փոփոխել «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխման չափով: